

րին... Ի՞նչը քարացրեց իմ հաւատը, ի՞նչը խեղդեց իմ մէջ ազգային բոլոր սուրբ զգացմունքները... — Միայն դու, քո սէրը միայն ո՛վ Որմիզդուխտ»...

* * *

Եւ անդուլ կը թաւալի պերճախօսութեան հոսանքը, մերթ հանդարտ ծփանքներով, սըրտապարար ու գուրգուրիչ — արծիւն է, որ կը ճախրէ Լիբերային բարձունքներում — մերթ մոլեգին յորձանքներով, որոտ ու շանթ արձակելով...

Եւ անդուլ կ'արտաբերէ տաղանդի իր դոհարները — հատոր հատորի ետեւէ — կ'արտաբերէ ու կ'անցնի, առանց յետ նայելու, — վայրկեանները այնքա՞ն սուղ են...

Բնութեան պէս՝ շոյլ ու բեղմնաւոր, տարերքի պէս՝ խօլական ու անհաշիւ...

Շատերը զարմանքով հարց կուտային — ուրիշ՞ կուզայ այդ մըրկային ոյժը, ինչպէ՞ս կը տեղաւորուէր հրաբուխը այդ ճիւղում ու լակեաց մարդու մէջ, որու սրտում կարծես թէ կիրք չկար բնաւ, որը առօրեայ կեանքի մէջ երբեք բարկանալ, պոռթկալ չգիտէր, որը դառան պէս հեղ ու խոնարհ էր, ծովի պէս՝ հանդարտ ու հաւասարակշռում...

Վտիտ, թուրակազմ մարմին մը՝ փոքրահասակ եւ ընդհանրապէս փղձուկ, անհրապոյր արտաքինով։ Մտայլ, հիւանդոտ աչքեր՝ մութ ակնոցներու ետեւը թաղնուած։ Միակ գիծը որ աչքի կը զարնուի — լայն, հպարտ ճակատն է, վաղաժամ կնճռոտում չարքաշ կեանքի հարուածներէն ու ցաւերէն։

Անեկդոտներ կը շրջին Վարպետի չնաշխարհիկ պաղարիւնութեան ու համբերութեան մասին։ Չէր զայրանայ, անգամ երբ անիրաւի, անտեղի կը վիրաւորէին զինքը։ Չէր բարձրացնի խօսելու տոնը ամենէն վրդովեցուցիչ արարքներու հանդէպ, հրապարակի վրայ կամ լրագրական բանակոխներում։ Կիրթ ու զուսպ՝ նա կը տար իր մտրակող պատասխանը եւ կ'անցնէր պաղ, անխռով, հաւատարիմ մեծ Դանտէի հրահանգին։ Segui il tuo corso e lascia dir lagente (Շարունակի՛ ճամբադ եւ թող մարդիկ ըսեն, ինչ որ կ'ուզեն)։

Օր մը Թիֆլիսի մէջ թղթավաճառը կամենալով անգամ մը Րաֆֆին բարկացած տեսնել,

զերագոյն փորձ մը կ'ընէ իր ցանկութիւնն իրագործելու։ Երբ վիպասանը ըստ սովորութեան հանդարտ, գլխակոր կ'անցնէր փողոցէն, նա բունն ու շինծու զայրոյթով կը յարձակուի վրան եւ կը պահանջէ իրեն տրուելիք պարտքը։ Սիրով, քաղցրութեամբ, Րաֆֆին կը յորդորէ մարդուն քիչ մ'ալ սպասել, մինչեւ գըրքերը կը ծախուին։ Բայց թղթավախառը հետրզհետէ գիտմամբ աւելի կը խորացնէ իր տոնը եւ ի վերջոյ օձիքէն կը բռնէ. «Տուէ՛ք վերջապէս ձեր պարտքը, ապա թէ ոչ դատի կը կոչեմ ձեզ»...

Ապարդիւն փորձեր էին...

Րաֆֆին նշանախեց մ'անգամ չէր բարձրացնէր իր ձայնը եւ չէր դուրս գար իր պաղարիւնէն։

Սակաւախօս եւ վերին աստիճանի համեստ ու ամաչկոտ։ Կը պատմեն, որ «Մշակ»ի ստաշին տարուան ժողովներուն, 1871-ին, երբ Գրիգոր Արծրունիի բնակարանին մէջ պարբերաբար կը հաւաքուէր Թիֆլիսի հայ ազատախոհ մտաւորականութիւնը եւ ծրագիրներ կ'որոճային ու տաք-տաք կը վիճաբանէին ամբողջ գիշերներ, — փայաջուկցի համեստ վաճառականը, ապագայ Րաֆֆին, կը նստէր այդ ժողովներուն համրի պէս անկիւնի մը մէջ կծկուած, անշարժ ու մոռնջ, ասես չէր ալ լսեր վիճաբանութեան ժխորը, ասես միտքը ուրիշ տեղեր կը սաւառնէր։

Եւ սակայն, հայ դեկավարող երիտասարդութեան այդ հաւաքոյթները խորապէս կ'ալեկոծէին անոր հայրենասէր սիրտը եւ շուտով այդ «համբը» պերճախօսութեան թռիչքներով պիտի ապշեցնէր հայ աշխարհը...

IV

Իր աստղը սկսեւ էր բարձրանալ հայ դրական հորիզոնին վրայ դեռ վաթսուներկան թրուականներէն։ Առեւտրականը աւելի տուրիստ մըն էր, ուխտաւոր մը, հայրենիքի կարօտով այրուող ու մաշուող երիտասարդ մը, որ Սալմաստէն յաճախակի պտոյտներ կ'ընէ թիւրքաց Հայաստանի մէջ, մասնաւորապէս Վասպուրականում։ Կ'երթայ կրօնական բարեպաշտութեամբ երկրպագելու հին փառքերու յիշատակներուն, կ'անցնէ հառաչելով այն վայրերէն, որոնք հեռաւոր անցեալի մէջ թատր ե-